3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 73

«18» 12 2019 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՀՍՏԱԿԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրությամբ սահմանված՝ Հայաստանի Հանրապետության դատախազության գործառույթների իրականացման ընթացքում Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներին վերապահված գործառույթները հստակեցնելու, ինչպես նաև դրանց արդյունավետ և համակարգված իրականացումն ապահովելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 4-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Զինվորական կենտրոնական դատախազության կայազորների զինվորական դատախազությունների գործունեության նկատմամբ վերահսկողության բաժնին (սույն կետում այսուհետ՝ Բաժին)՝ «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված շրջանակներում իրականացնել Հայաստանի Հանրապետության դատախազության կանոնադրության 11-րդ կետով և 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված լիազորությունները կայազորների զինվորական դատախազությունների դատախազների անմիջական դատավարական ղեկավարմանը և դատախազական հսկողությանը ենթակա գործերով: Սահմանել, որ Բաժնի դատախազների կողմից օրենքով և սույն հրամանով նախատեսված անմիջական դատախազական հսկողության և դատավարական ղեկավարման, ինչպես նաև դատարանում մեղադրանքի պաշտպանության գործառույթները կարող են իրականացվել միայն կոնկրետ դեպքով Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի հանձնարարության հիման վրա:

2. Զինվորական կենտրոնական դատախազության զինվորական ծառայության դեմ ուղղված հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության

բաժնին (սույն կետում այսուհետ՝ Բաժին)՝ «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված շրջանակներում իրականացնել կանոնադրության 11-րդ կետով, 12-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված գործառույթները: Սահմանել, որ Բաժնի դատախազների կողմից օրենքով և սույն հրամանով նախատեսված անմիջական դատախազական հսկողության և դատավարական ղեկավարման գործառույթներն իրականացվում են այն բոլոր հանցագործություններով, որոնցով մինչդատական վարույթ է իրականացվում Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերով քննության վարչությունում, ինչպես նաև՝ կոնկրետ գործով Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի հանձնարարության հիման վրա:

3. Զինվորական կենտրոնական դատախազության պետական շահերի պաշտպանության բաժնին՝ «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված շրջանակներում իրականացնել կանոնադրության 11-րդ կետով և 12-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված գործառույթները:

4. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2009 թվականի մայիսի 23-ի՝«Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությանը և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչություններին վերապահված լիազորությունները հստակեցնելու մասին» N 27 հրամանի 8-րդ կետը:

5. Հրամանի կատարման վերահսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի վրա:

6. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ